Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6587
6588
6589

891.99
Q-83

784

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԱՀԱՐՈՆ ՄՍՐԼԵԱՆ

# ԴԱՍԸՆԹԱՑՔ
# ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

## ԴԻՒՐՈՒՍՈՅՑ ՄԷԹՈՏՈՎ

Կ. ՊՈԼԻՍ
Տպագր. ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
1911

3387

7 924-57

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Օտար վարժարանաց մէջ երկար տարիներէ ի վեր ձայնական երաժշտութիւնը կարեւոր ուսմանց կարգը անցած է նկատի առնելով անոր թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ բարոյական մեծամեծ օգտակարութիւնները: Այդ մասին Եւրոպայի մէջ շատ միջոցներ կան եւ այլազան դասագիրքեր պատրաստուած են որոնք ցարդ կը պակսին մեզ, մինչդեռ երաժշտութեան փափաքը մեր մէջ եւս սկսած է հետզհետէ աւելնալ եւ շատ մը հայ վարժարանաց մէջ ձայնական երաժշտութիւն կ'աւանդուի:

Հակառակ մեր մէջ երաժշտութեան ստացած այդ տարածման հանգամանքին, յարմար եւ դիւրուսոյց դասագիրքի մը չգոյութիւնը ստիպեց մեզ որպէս զի ձեռնարկենք ներկայ աշխատութեանը եւ կը համարենք թէ օգտակար պիտի կրնայ ըլլալ ան իբր երաժշտութեան ուղեցոյց մը թէ՛ աշակերտին եւ թէ դասատուներուն՝ որոնց բարեհաճ նկատառման կը յանձնենք:

Գրքին բովանդակութիւնը երկու մասի բաժնուած է: Առաջին մասը կը բովանդակէ նիւթական կանոններ, դիւրըմբռնելի բացատրութիւններով եւ գործնական հրահանգներով, ինչպէս նաեւ երաժշտութեան վերաբերեալ ամբողջ գիտելիքներու եւ ասացուածներու ֆրանսերէնը կամ իտալերէնը:

Երկրորդ մասը հայկական նոր երգերու բովանդակութիւն մըն է, միաձայն, երկձայն եւ եռաձայն դաշնաւորուած՝ դաշնակի կամ օրկի ընկերակցութեամբ:

Պատուարժան ուսուցիչներէ կը խնդրենք որ մեր ներկայ աշխատութիւնը երաժշտական ուսման նախագիծը նկատելով տրուած հրահանգները իրենց կողմէ հաճին ճոխացնել պարագաներու եւ ընդունակութիւններու համեմատ:

Ա. ՍՄՐԼԵԱՆ

# ԴԱՍԸՆԹԱՑՔ

# ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

## ԴԱՍ Ա.

1. — Երաժշտութիւնը *զանազան ձայներու կապակցութեամբ, ականջին ներդաշնակութիւն պատճառող արուեստ մըն է*։

2. — Ձայները կ'արտադրուին *մարդկային ձայնով և կամ երաժշտական գործիքներով*։

3. — Ձայները կ'արտայայտուին *մասնաւոր նշաններով, որոնք ձայնանիշ* (note) *կը կոչուին*։

4. — Ձայներու տեսակները *եօթը են*. տօ, *ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի*:

5. — Ձայները կը զանազանուին *իրարմէ՝ ձայնանիշերուն գիծերու* (lignes) *և միջագիծերու* (interligne) *վրայ գրուելովը*։

6. — Գիծերը *հինգ հատ կ'ըլլան*։

7. — Միջագիծերը *չորս հատ կ'ըլլան*։ *Ասոնք* հինգգծեայ (portée) *կը կոչուին*։




8. Բացի հինգ գիծերէն *ուրիշ գիծեր ալ կրնան գծուիլ. այսինքն* հինգգծեայէն *դուրս, ըլլայ վերէն, ըլլայ վարէն, և*

այդ պատճառաւ յաւելուածական գիծեր (lignes supplémentaires) կը կոչուին անոնք :




9. Բանալիները (clefs) մէկ քանի տեսակ են, որոնցմէ ամէնէն գործածականները երկու հատ են. մէկը՝ գլէ տը ֆա (clef de fa), իսկ միւսը՝ գլէ տը սօլ (clef de sol) : Հինգգծեային (portée) վարէն սկսեալ երկրորդ գծին վրայ գլէ տը սօլը կը գրուի :

Գլէ տը սօլ



Բանալիին առաջքը գրուած նշանը ձայնանիշ (note) կը կոչուի:

Իսկ գլէ տը ֆան (clef de fa) չորրորդ գծին վրայ կը գրուի :

Գլէ տը ֆա



## ՀՐԱՀԱՆԳ I

Պէտք է հետեւեալ ձայնանիշերուն անուններն զանազանել, առանց երգելու : Յետոյ պէտք է ընդօրինակել այս հրահանգը իւրաքանչիւր ձայնանիշերուն անուններն իրենց տակը գրելով :




*Վերոգծեալ հրահանգէն զատ ուսուցիչը պէտք է զանազան հրահանգներ ալ գրելով ձայնանիշերուն անունները լաւ մը արտասանել ու զանազանել տալ մինչեւ որ աշակերտները լաւ մը վարժուին։*

### ՀԱՐՑԱՐԱՆ

1. — *Երաժշտութիւնը ի՞նչ է։* 2. — *Ձայները ի՞նչպէս կ'արտագրուին։* 3. — *Ձայները ի՞նչպէս կ'արտայայտուին։* 4. — *Ձայներու տեսակները քանի՞ են։* 5.— *Ձայները ի՞նչպէս կը զանազանուին իրարմէ։* 6. —*Գիծերը քանի՞ հատ են։* 7.— *Միջագիծե՞րը քանի հատ են։* 8.— *Բայց ի հնգագիծեայներէն ուրիշ գիծեր ալ կա՞ն։* 9. — *Բանալիները քանի՞ հատ են։*

## ԴԱՍ Բ.

10. Ձայնանիշերը *եօթը տեսակ ձեւ ունին։*

1. Ռօնտ
Ronde



4 ժամանակ կ'արժէ

2. Պլանշ
Blanche



2 ժամանակ կ'արժէ

3. Նուար
Noire



1 ժամանակ կ'արժէ

4. Քռօշ
Croche



$^1/_2$ ժամանակ կ'արժէ

5. Տուպլը քռօշ
Double croche



$^1/_4$ ժամանակ կ'արժէ

6. Թրիպլը քռօշ
Triple croche



$^{1}/_{8}$ ժամանակ կ'արժէ

7. Քատրիւբլը քռօշ
Quadruple croche



$^{1}/_{16}$ ժամանակ կ'արժէ

## ՑՈՒՑԱԿ




ՀՐԱՀԱՆԳ 2

Պէտք է վերոյիշեալ ամէն տեսակ ձայնանիշերուն *(նօթե-րու)* համար արժէքները տարբեր տեսակ ձայնանիշերով հակակշռելու վարժութիւններ ընել տալ աշակերտաց :

Օրինակ







**11.** Իրարու կցուելիք ձայնանիշերը (նօթ) *հետեւեալներն են. — Քռոշ, տուպլը քռոշ, թրիպլը քռոշ եւ քատրիփլը քռոշ: Իսկ ռոնտ, պլանշ, նուար իրարու չեն կցուիր:*

**12.** Չափը (mesure) *եղանակի մը կարճ եւ հաւասար մասերը իրարմէ կը բաժնէ, եւ իրարմէ բաժնող գիծը* չափագիծ (barres de mesure) *կը կոչուի:*




**13.** Երկու տեսակ չափ կայ. *առաջին պարզ չափ* (mesure simple). *երկրորդ բաղադրեալ չափ* (mesure composée):

**14.** Պարզ չափերն են. *երկու չորրորդ* $\frac{2}{4}$, *երեք չորրորդ* $\frac{3}{4}$, *չորս չորրորդ* $\frac{4}{4}$ *կամ* C:

Օրինակ




Երկու չորրորդ  Երեք չորրորդ  Չորս չորրորդ

Երկու չորրորդ բանալով կը հասկնանք թէ, վարի թիւը որակն է, իսկ վերի թիւը քանակը. զոր օրինակ ($\frac{2}{4}$) երկու չորրորդ չափ մը երկու ժամանակ կը պարունակէ, այսինքն ռօնտը չորս մասի բաժնուած՝ ու երկու մասը առնուած է։

Օրինակ Երկու չորրորդի



Օրինակ Երեք չորրորդի



Օրինակ Չորս չորրորդի



## ՀՐԱՀԱՆԳ 3

Պէտք է պարզ չափերու վրայ զանազան ձայնանիշերով հատուածներ գրել տալ աշակերտաց։

15. Բաղադրեալ չափերն (mesures composées) են երեք ութերորդ $\frac{3}{8}$, վեց ութերորդ $\frac{6}{8}$, ինը ութերորդ $\frac{9}{8}$, տասներկու ութերորդ $\frac{12}{8}$ և որոնց երեք մասը՝ այսինքն երեք քրօշը պէտք է միշտ միանուագ համրել։

### Օ ր ի ն ա կ



Երեք ութերորդ $\frac{3}{8}$ ըսելով պէտք է հասկնալ թէ վերի մասը քանակն է, իսկ վարի մասը որակը։ Այսինքն մէկ ռօնտը հաւասար ութը մասի բաժնուած — որ քռօշ ըսել է — երեք մասը առնուած։

Օրինակ՝ Երեք ութերորդի



Օրինակ՝ Վեց ութերորդի



Օրինակ՝ Ինը ութերորդի



Օրինակ՝ Տասներկու ութերորդի



### ՀՐԱՀԱՆԳ Գ

Պէտք է բաղադրեալ չափերու վրայ զանազան ձայնանիշերով գրելու վարժութիւններ տալ աշակերտաց :

## ԴԱՍ Գ.

16. Չափը *երկու մաս ունի. առաջինը՝* զօրաւոր մաս (tempe fort) *երկրորդը* տկար մաս (tempe faible)։ *Երկու չորրորդ* $\frac{2}{4}$ *պարունակող չափի մը առաջին մասը զօրաւոր է, իսկ երկրորդ մասը տկար է։ Երեք չորրորդ* $\frac{3}{4}$ *պարունակող չափի մը առաջին մասը զօրաւոր է, իսկ միւս երկուքը տկար է։ Չորս չորրորդ* $\frac{4}{4}$ *կամ* C *պարունակող չափի մը առաջին մասը զօրաւոր, երկրորդը տկար, երրորդը կէս զօրաւոր, չորրորդը տկար է։*

17. Ձայնական երաժշտութեան համար *պէտք է աջ ձեռքով (զարնելով) համրել, ոչ թէ ոտքով։*

Երկու չորրորդ $\frac{2}{4}$ *չափի մը համար պէտք է աջ ձեռքը վերէն վար իջեցնել առաջին մասին համար, իսկ երկրորդ մասին համար ալ վարէն դէպ ի վեր մինչեւ ուսը չարժել։*



Ա.Մաս Բ.Մաս

*Մէկ ռոնտը ձեռքի չորս շարժում ունի, մէկ պլանշը երկու շարժում ունի, մէկ նուարը՝ մէկ շարժում ունի, երկու քռօշը մէկ շարժում ունին, չորս տուպլը քռօշը մէկ շարժում ունին:*

## ՀՐԱՀԱՆԳ 5

Հետեւեալ հրահանգին ձայնանիշերը առանց երգելու պէտք է անուանել, յետոյ աջ ձեռքը շարժելով համրել: Ստորակէտ (virgule) եղած տեղերը պէտք է շունչ առնել:



# ԴԱՍ Դ.

*Երեք չորրորդ $\frac{3}{4}$ չափի մը համար պէտք է աջ ձեռքը վերէն վար իջեցնել՝ առաջին մասին համար, երկրորդ մասին համար, դէպ ի աջ կողմը տանիլ, իսկ երրորդին համար, դէպ ի վեր շարժել։*






Ա. Մաս Բ. Մաս Գ. Մաս

## ՀՐԱՀԱՆԳ 6

Պէտք է աջ ձեռքը շարժելով համրել, եւ ձայնանիշերը առանց երգելու անուանել։









Զոյգ չորրորդ $\frac{4}{4}$ (կամ C) չափի մը համար պէտք է աջ ձեռքը վերէն վար իջեցնել առաջին մասին համար, երկրորդին համար դէպ ի ձախ, երրորդին համար դէպ ի աջ, չորրորդին համար դէպ ի վեր շարժել։






Ա. մաս Բ. մաս Գ. մաս Դ. մաս

### ՀՐԱՀԱՆԳ 7

Պէտք է աջ ձեռքը շարժելով համրել եւ ձայնանիշերը առանց երգելու անուանել։



ՀԱՐՑԱՐԱՆ.

10. — Ձայնանիշերը քանի՞ տեսակ ձեւ ունին։ — 11. Իրարու կցուելիք ձայնանիշերը որո՞նք են ու չկցուածները որո՞նք։ — 12. Չափը ի՞նչ է։ — 13. Քանի՞ տեսակ չափ կայ։ — 14. Պարզ չափերը որո՞նք են։ — 15. Բաղադրեալ չափե՞րը որոնք են։ — 16. Չափը քանի՞ մաս ունի։ — 17. Չափերը ի՞նչ կերպով պէտք է համրել։

## ԴԱՍ Է.

**18. Ընթացքը** (mouvement) *եղանակի մը առաւել կամ նուազ արագութիւն տալուն կը ծառայէ։*

Հետեւեալ ցուցակին մէջ ընթացքի տեսակներուն իտալերէն անունները եւ թարգմանութիւնները գրուած են։

## ԸՆԹԱՑՔԻ (MOUVEMENT) ՏԵՍԱԿՆԵՐ

| Իտալերէն | Համառօտ | Արտասանութ. | Թարգմանութիւն | Ճօճանակի չափ |
|---|---|---|---|---|
| Largo | — | Լարկօ | Լայնութեամբ | 2 էն 3 մէթրօ |
| Lento | — | Լէնթօ | Յամր | 2 էն 3 մէթրօ |
| Adagio | Adg. | Ատաճիօ | Շատ յամր | 2 էն 3 մէթրօ |
| Larghetto | — | Լարկէթօ | Հանդարտ | 1 մէթր 50 սանթիմ. |
| Andante | And. | Անտանթէ | Հեշտական | 1 մէթրօ |
| Andantino | Ando. | Անտանթինօ | Նուազ յամր | 70 էն 80 սանթիմ. |
| Moderato | Mod. | Մօտէրաթօ | Չափաւոր | 50 էն 60 » |
| Allegretto | Allo. | Ալէկրէթօ | Նուազ արագ | 30 էն 40 » |
| Allegro | All. | Ալէկրօ | Արագ | 20 էն 30 » |
| Vivace | — | Վիվաչէ | Շուտութեամբ | 20 էն 30 » |
| Presto | — | Փրէսթօ | Շուտ | 10 էն 12 » |
| Prestissimo | — | Փրէսթիսիմօ | Շատ շուտ | 6 էն 8 » |

*Վերոյիշեալ ցուցակին մէջ եղած զանազան ընթացքները* (mouvement) *թէեւ* չափացոյցի (métronome) *միջոցաւ միայն կրնայ որոշուիլ, սակայն այդ գործիքը ամենուն տրամադրելի չըլլալուն համար, տարբեր կերպով ալ կարելի է որոշել ընթացքներու տարբերութիւնը: Այսինքն. բարակ ժապաւէնի մը ծայրը կապարէ գնդակ մը անցընելով ճօճանակ մը կ'ունենանք, այդ ճօճանակին երկայնութիւնը վերոյիշեալ ցուցակին թուանշաններուն համեմատ կ'երկարացնենք կամ կը կարճեցնենք. այն ատեն բնական է որ քանի երկարի՝ շարժումը այնքան կը դանդաղնայ, իսկ քանի կարճնայ կը շուտնայ:*

---

19. **Ձայներանգը** (nuance) *եղանակին մը* զօրաւոր (fortes) *կամ* տկար (faibles) *մասերը կը յատկանշէ:*

**Հետեւեալ ցուցակին մէջ ձայներանգներու իտալերէն անունները եւ թարգմանութիւնները դրուած են:**

# ՁԱՅՆԵՐԱՆԳՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐ

| Իտալերէն | Համառօտ | Արտասանութիւն | Թարգմանութիւն |
|---|---|---|---|
| Rallentendo | Rall. | Ռալէնթէնտօ | Դանդաղութեամբ |
| A tempo | — | Ա. թամփօ | Նախկին ընթացքը տալ |
| Gracioso | — | Կրաչիօզօ | Ազնուացեալ |
| Sostunuto | Sost. | Սօսթէնիւթօ | Պերճ |
| Poco à poco | — | Փօգօ ա փօգօ | Քիչ առ քիչ |
| Subito | — | Սուպիթօ | Յանկարծ |
| Risoluto | — | Ռիզօլիւթօ | Լուծել |
| Maestoso | — | Մաէսթօզօ | Պայծառ |
| Perdendosi | — | Բէրտէնտօզի | Մոլորել |
| Piano | P. | Բիանօ | Կէս ձայն տալ |
| Pianissimo | P. P. | Բիանիսիմօ | Շատ մեղմ |
| Forte | F. | Ֆօրթէ | Ուժով |
| Fortissimo | F. F. | Ֆօրթիսիմօ | Շատ ուժով |
| Mezzo forte | M. F. | Մէձօ ֆօրթէ | Կէս ուժ տալ |
| Mezza voce | M. V. | Մէձա վօչէ | Կէս ձայն |
| Crescendo | Cres. | Կրէշանտօ | Հետզհետէ աւելցնել |
| Decrescendo | Decres. | Տէգրէշանտօ | Հետզհետէ նուազեցնել |
| Diminuando | Dim. | Տիմինուէնտօ | Պակսեցնել |
| Legato | Leg. | Լէկաթօ | Կապուած |
| Leggieramsnto | Legg. | Լէճիէրամէնթէ | Թեթեւութեամբ |
| Animato | — | Անիմաթօ | Ոգեւորութեամբ |
| Dolce | — | Տօլչէ | Անուշ, մեղմ |
| Adlibitum | Adl. | Ատլիպիթում | Ըստ կամս |

# ԴԱՍ Զ.

## ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Թիւ 1

*Թիւ 1 ձեւը կը նշանակէ թէ ձայնը պէտք է մեղմ սկսիլ ու հետզհետէ զօրացնել ։*



Թիւ 2

*Թիւ 2 ձեւը կը նշանակէ թէ ձայնը պէտք է զօրաւոր սկսիլ և հետզհետէ մեղմացնել ։*



Թիւ 3

*Թիւ 3 նշանին մէջ երկու ձայնանիշերու վրայ գրուած կիսաքոլորակ գիծը ,* կապ (liéson) *կը կոչուի , որ կը նշանակէ թէ երկու կամ բազմաթիւ ձայնանիշեր իրարու կապուած են ։ Այդ պարագային պէտք չէ շունչ առնել ։*



Թիւ 4

*Թիւ 4 նշանը , այսինքն կէտ մը որ ձայնանիշին վրայ գրուած է , ձայները իրարմէ լաւ մը բաժնելու հանգամանքը ունի և կը կոչուի* Note détaché ։



Թիւ 5

*Թիւ 5 նշանը որ ձայնանիշին վրայ գրուած է, կը նշանակէ թէ նոյն ձայնը լաւ մը* շեշտուած (accentué) *պէտք է ըլլայ, և կը կոչուի* շեշտ (accent)։



Թիւ 6

*Թիւ 6 նշանը որ ձայնանիշին վրայ գրուած է* երկարացում (point d'orgue) *կը կոչուի, որ կը նշանակէ թէ, իր արժէքէն աւելի պէտք է երկարացնել։*



Թիւ 7

*Թիւ 7 ձեւը* կրկնութեան (reprise) *նշան է, որ ըսել է նոյն հատուածը պէտք է կրկնել։ Կրկնութեան նշանը երկու գիծէ և երկու կէտէ կը բաղկանայ։*



Թիւ 8

*Թիւ 8 նշանը, որ* դարձանշեան (renvoi) *կը կոչուի, կը նշանակէ թէ նոյն դարձանշանէն յետոյ իրմէ առաջ գրուած նշանին պէտք է վերադառնալ, և յետոյ մինչև վերջացած տեղը չարունակելով վերջացնել եղանակը։*

Դարձանշանը մեր (Տ) տառին գիրն կը նմանի որուն մէջտեղէն գիծ մը քաշուած ու երկու կողմը մէյմէկ կէտ դրուած է։

### ՀԱՐՑԱՐԱՆ

18. Ընթացքը ի՞նչ է։ — 19. Ձայներանգը ի՞նչ է։ — Երաժշտութեան վերաբերեալ քանի՞ տեսակ նշաններ կան եւ որո՞նք են։

## ԴԱՍ Է.

### ՁԱՅՆԱԼՌՈՒԹԵԱՆ (SILENCES) ՆՇԱՆՆԵՐ

20. Ձայնալռութիւնը կը նշանակէ թէ եղանակ մը երգելու միջոցին պէտք է վայրկենական կենալ, այսինքն լռել կամ սպասել։

21. Եօթը տեսակ ձայնալռութեան նշաններ կան որոնց կենալու արժէքները եօթը տեսակ ձայնանիշերուն արժէքներուն կը համապատասխանեն։


Բօզ, 4 ժամանակ, որ հաւասար է



Տըմի բօզ, 2 ժմկ. որ հաւասար է



կամ  սուփիր, 1 ժմկ. հաւ. է



Տըմի սուփիր, 1/2 ժմկ. հաւասար է



Քար տը սուփիր 1/4 ժմկ. հաւասար է




Ութիեմ տը սուքիր $^1/_8$ ձմկ. հւոր. է





Մեզիեմ տը սուքիր $^1/_{16}$ ձմկ. հւոր. է



### ՀՐԱՀԱՆԳ 8

Վերոյիշեալ զանազան ձայնայուրեան նշաններուն դէմ, պէտք է գրել նոյն արժէքը ունեցող ձայնանիշեր եւ փոխադարձաբար:

---

## ԿԷՏ (POINT)

22. Կէտը *երբ ձայնանիշի մը քով դրուի, անոր արժէքին կէսը աւելցուած կ'ըլլայ: Զոր օրինակ պլանչը որ երկու ժամանակ արժէք ունի, քովը կէտ մըն ալ աւելցնելով — որ իրմէ առջի ձայնանիշին կէսը ըսել է — երեք ժամանակ արժէք ունեցած կ'ըլլայ:*



Պլանշը որ երկու նուար կ'արժէ, քովը կէտ մը աւելցնելով երեք նուարի կը համարի:



Նուարը որ երկու քրոշ կ'արժէ, քովը կէտ մը աւելցնելով երեք քրոշի կը համարի:



Քրոշը որ երկու տուպլ քրոշ կ'արժէ քովը կէտ մը աւելցնելով երեք տուպլ քրոշի կը համարի:

Կէտը նմէ ձայնալռութեան նշաններուն (silences) քովն ալ գտնուի, միեւնոյն դերը կը կատարէ։ Զոր օրինակ, չորս ժամանակ լռութեան նշան մըն է բօղը որուն քովը կէտ մը աւելցնելով — որ անոր արժէքին կէսն է — ամբողջը վեց ժամանակ լռութիւն եղած կ՚ըլլայ։

### ՀԱՐՑԱՐԱՆ

20. Ձայնալռութիւնը ի՞նչ կը նշանակէ։ — 21. Քանի՛ տեսակ ձայնալռութեան նշաններ կան։ — 22. Կէտը ի՞նչ դեր կը կատարէ ձայնանիշի մը քով։

## ԴԱՍ Ը.

### ՁԱՅՆԱՆԻՇԵՐԸ ՀԵԳԵԼՈՒ ԵՒ ԵԼԵՒԷՋԵԼՈՒ ԿԵՐՊԸ

### (SOLFÈGE ET INTONATION)

Ձայնանիշերը հեգելուն եւ ելեւէջելուն շատ զգուշութիւն ընելու և խիստ կարեւորութիւն տալու է։ Երգելու ժամանակ պէտք է ուղիղ դիրք մը ունենալ։ Գլուխը բարձր կենալու է. ձայներու արձակումը պէտք է համարձակ ըլլայ, ձայներուն պէտք է լաւ հոգ տանիլ, խօսքերուն արտասանութիւնը պէտք է որոշ ըլլայ։ Վերջապէս աշակերտները ճիշդ նմանութիւն պէտք է տան ըլլայ ուսուցչին կողմէ երգուած ձայներուն, ըլլայ ո և է նուագի մը ձայներուն։

Ձայները արձակելու ատեն բերանը պէտք է լաւ մը բանալ, և փողակը այն տեսակ դիրք մը պէտք է ունենայ, իբր թէ ձեռքերը տաքցնելու համար փչել պէտք կ՚ըլլայ։

Տղաքներուն միջին ձայնը ընդհանրապէս վարի (տօ)էն մինչեւ վերի (ֆա)ն կրնայ համնիլ։

Օրինակ



*Սակայն նախնական վարժութիւններու ատեն պէտք է զգուշանալ մինչեւ վերի (ֆա)ն հանել տալու աշակերտին։*

## ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

23. **Երաժշտութեան ընթերցման վարժուելու** *համար նախ պէտք է* **չափական ընթերցում.** (lecture rythmique). *երկրորդ* **ձայնանիշերը հնչել** (solfier). *երրորդ՝* **ձայներգել** (vocaliser)։

24. **Չափական ընթերցումը** *կը նշանակէ թէ պէտք է իւրաքանչիւր չափերը զարնելով — համրելով — ձայնանիշերը կարդալ առանց երգելու։*

25. **Ձայնանիշերը հնչել** *կը նշանակէ թէ պէտք է իւրաքանչիւր ձայն իրեն հաւասար արժէքով արձակել. եւ ամէն ձայնանիշերուն անունները պէտք է երգելով տալ. իբր թէ տրուած ձայնանիշերուն անունները խօսքերը ըլլային։*

26. **Ձայներգել** *կը նշանակէ թէ պէտք է ամէն ձայն իրենց խօսքերով երգել, առանց ձայնանիշերուն անունները տալու։*

*Ուրիշ կերպով մըն ալ կրնայ երգուիլ, ինչպէս ձայնաւոր գիր մը ընտրել, այսինքն O գիրը որ ամէնէն յարմարն է այդ O գիրով կարելի է ամբողջ եղանակը երգել։*

### ՀԱՐՑԱՐԱՆ

23. *Երաժշտութեան ընթերցման համար ի՞նչ կերպով վարժութիւն ընելու է։* — 24. *Չափական ընթերցման կերպը ի՞նչ է։* — 25. *Ձայնանիշերը հնչելու կերպը ի՞նչ է։* — 26. *Ձայներգելու կերպը ի՞նչ է։*

### ՀՐԱՀԱՆԳ 9



**Ծանօթ.** — *Ուսուցիչը պէտք է վերոգրեալ հրահանգը լաւ մը վարժեցնել տայ աշակերտներուն, յետոյ աշակերտները պէտք է ընդօրինակեն զայն, որպէս զի ձայնագրութեան ալ վարժուին. ասկէ զատ ուսուցիչը պէտք է իր կողմանէ ալ նոյն ընթացքը ունեցող զանազան հրահանգներ գրել տայ, առաջին անգամ ռօնտով, պլանշով եւ յաջորդաբար զանազան տեսակ ձայնանիշերով:*

## ԴԱՍ Թ.

### ՄԻՋՈՑ (INTERVALLES)

**27.** **Միջոցը** այն է՝ որ երկու ձայնանիշերը իրարմէ կը բաժնէ, զոր օրինակ (տօ)էն (րէ)ի կամ (տօ)էն (սօլ)ի մէջ տարբեր միջոցներ կը գտնուի. իւրաքանչիւր միջոց իր մասնաւոր անունը ունի՝ իրարմէ բաժնուած աստիճաններուն համեմատ:

Ահաւասիկ ամբողջ միջոցներուն (intervalles) անունները, եւ օրինակները, իրենց մասնաւոր անուններով:



Նոյնաձայն (unison) միեւնոյն ձայնին կրկնութիւնը, որ նոյն աստիճանը բռնել է :




Երկրորդ միջոց (intervalle de seconde), երկու աստիճանի հեռաւորութիւն ունի :




Երրորդ միջոց intervalle de tierce) երեք աստիճանի հեռաւորութիւն ունի :




Չորր րդ միջոց (intervalle de quarte) չորս աստիճանի հեռաւորութիւն ունի :




Հինգերորդ միջոց (intervalle de quinte) հինգ աստիճանի հեռաւորութիւն ունի :




Վեցերորդ միջոց (intervalle de sixte) վեց աստիճանի հեռաւորութիւն ունի :




Եօթերորդ միջոց (intervalle de septième) եօթը աստիճանի հեռաւորութիւն ունի :




Ութերորդ միջոց (intervalle d'octove) ութը աստիճանի հեռաւորութիւն ունի :

**ՀՐԱՀԱՆԳ 10** Երկրորդ միջոց ունեցող



**ՀՐԱՀԱՆԳ 11** Երրորդ միջոց ունեցող



**ՀՐԱՀԱՆԳ 12** Չորրորդ միջոց ունեցող



### ՀՐԱՀԱՆԳ 13

Հինգերորդ միջոց ունեցող




### ՀՐԱՀԱՆԳ 14

Վեցերորդ միջոց ունեցող



**ՀՐԱՀԱՆԳ 15** — Եօթներորդ միջոց ունեցող



**ՀՐԱՀԱՆԳ 16** — Ութերորդ միջոց ունեցող





**Ծանօթ.** — *Վերոգծեալ եօթը զանազան միջոցներու հրահանգներէն զատ, ուսուցիչը պարտաւոր է, իւրաքանչիւրին բազմապիսի հրահանգներ տալ աշակերտներուն, մինչեւ որ աշակերտները ամէն մէկ միջոց պարունակող հրահանգները շատ մը երգելու վարժուած ըլլան։ Այսինքն երկրորդ միջոցէն մինչեւ ութերորդ միջոցը շատ մը շատ մը սորվին։*

## ԴԱՍ Ժ.

### ՍԷՆԳՕԲ (SYNCOP)

28. Սենգօբը չափի մը տկար մասէն մինչեւ զօրաւոր մասը կ'երկարի. նոյնաձայները միշտ իրարու կապուած կ'ըլլան. որով առաջին մասը (ձայնը) տկար կը հնչէ իսկ երկրորդը՝ զօրաւոր։

**Օրինակ**



ՀԱԿԱԺԱՄԱՆԱԿ ( CONTRE—TEMPS )

29. Հակաժամանակը *միշտ չափի մը տկար մասէն կը սկսի, իսկ զօրաւոր մասը լռութեամբ կ՚անցնի։*

Օրինակ



**ՀՐԱՀԱՆԳ 17**

Վերոյիշեալ սենգօբեն, եւ հակաժամանակեն զանազան օրինակներ պետք է գրել : Յետոյ երկու տեսակեն ալ հրահանգներ գրելով լաւ մը երգել տալու է :

## ԴԱՍ ԺԱ.

### ՏԻՅԷԶ (DIÈSE)

30. Տիյեզը ( ♯ ) *այս տեսակ նշան մըն է, և ո՛ և է ձայնի մը առաջքը կը դրուի. որով նոյն ձայնը՝ կէս ձայն աւելի բարձրացած կ՚ըլլայ։*

31. Պեմօլը (bémol) ( ♭ ) *այս տեսակ նշան մըն է և ո և է ձայնի մը առաջքը կը դրուի, որով նոյն ձայնը՝ կէս ձայն իջած կ՚ըլլայ։*

32. Պեքառը (bécarre) ( ♮ ) *այս տեսակ նշան մըն է, որ ձայնի մը առաջքը դրուելով նոյն ձայնը բնականի կը վերածէ։*

*Ըսենք թէ Ֆաերը տիյէզ կամ պէմօլ պիտի ըլլան, երբոր ո և է Ֆաի մը առաջքը պէքար դրուի՝ այն ատեն բնական Ֆա պիտի ըլլայ կը նշանակէ։*

*Վերոյիշեալ նշանները եթէ եղանակի մը ընթացքին մէջ պատահին.* պատահական նշաններ (signes accidentels) *կը կոչուին։*

*Իսկ եթէ եղանակի մը սկիզբը՝* որակախազին (armature) *մէջ գրուած ըլլան* սահմանական նշան (signes constitutifs) *կը կոչուի։ Օրինակի համար, ըսենք թէ ֆային գծին վրայ տիէզ մը կայ, այն ատեն ամբողջ ֆաները պէտք է տիէզ ըլլան։*

**ՀԱՐՑԱՐԱՆ**

27. *Միջոցը ի՞նչ է։* — 28. *Սէնգօբը ի՞նչ է։* — 29. *Հակաժամանակը ի՞նչ է։* — 30. *Տիէզը ի՞նչ է։* — 31. *Պէմօլը ի՞նչ է։* — 32. *Պէքառը ի՞նչ է։*

---

# ԴԱՍ ԺԲ.

## ՁԱՅՆԱՇԱՐ (GAMMES)

**33.** Ձայնաշարը *կարգ մը ձայնանիշերէ կը բաղկանայ որոնց միջոցաւ եղանակներ կը յօրինուին․ կարգ մը ձայնանիշեր ըսելով պիտի հասկցուի եօթը ձայնանիշերը․ այսինքն, տօ, րէ, մի, ֆա, սօլ, լա, սի․ և այս տեսակ շարքին* տօ-մաժօռ *ձայնաշար կ'ըսուի․* (gamme majeure de do)։

**34.** **Մաժօռ ձայնաշարէն** *զատ ուրիշ մըն ալ կայ, որ* մինօռ ձայնաշար (gamme mineure) *կը կոչուի։*

**35.** Ձայնաշարի *մը աստիճանները իրարու հաւասար չեն․ հինգ ձայնանիշերը իրարմէ մէկ աստիճան հեռաւորութիւն ունին, իսկ երկու ձայնանիշերը իրարմէ կէս աստիճան հեռաւորութիւն ունին։*

**Օրինակ**



| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Տօ էն | ռէ | 1 | աստիճան |
| 2 | Րէ էն | մի | 1 | « |
| 3 | Մի էն | ֆա | 1/2 | « |
| 4 | Ֆա էն | սօլ | 1 | « |
| 5 | Սօլ էն | լա | 1 | « |
| 6 | Լա էն | սի | 1 | « |
| 7 | Սի էն | տօ | 1/2 | « |

**Մաժօռ ձայնաշար** *մը հինգ ամբողջ ձայնէ և երկու կէս ձայնէ կը բաղկանայ։*

*Կէս ձայն հեռաւորութիւն ունեցողները* (3էն 4, և (7էն 8) *աստիճաններն են։*

## ՄԻՆՕՌ ՁԱՅՆԱՇԱՐ (GAMME MINEURE)

### Օրինակ



*Վերոյգծեալ օրինակին մէջ վեցերորդ աստիճանին այսինքն (ֆա)ին առջև, անկէ առաջ* տիէզ *չէին դնէր, որով վեցերորդէն եօթերորդ աստիճանին հեռաւորութիւնը մէկ ու կէս աստիճան էր․ այդ հեռաւորութիւնը ունեցող միջոցին* երկրորդ աւելցած միջոց (seconde augmantée) *կ՚ըսուի, ինչ որ* անհամաձայն միջոց *մըն է* (intervalle dissonance), *ուստի այս անհամաձայն միջոցը փրկելու համար, վեցերորդ աստիճանին առաջքը* տիէզ *մը կը դնեն, ինչպէս որ տեսանք վերը արդէն։*

Ձայնաշար մինօրի աստիճաններուն տարբերութիւնները հետեւեալներն են.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Լա էն | սի | 1 | աստիճան |
| 2 | Սի էն | տօ | $^1/_2$ | » |
| 3 | Տօ էն | րէ | 1 | » |
| 4 | Րէ էն | մի | 1 | » |
| 5 | Մի էն | ֆա տիէզ | 1 | » |
| 6 | Ֆա տիէզէն | սօլ տիէզ | 1 | » |
| 7 | Սօլ տիէզէն | լա | $^1/_2$ | » |

Ձայնաշար մինօրն ալ հինգ ամբողջ ձայներէ և երկու կէս ձայներէ կը բաղկանայ: Կէս ձայն հեռաւորութիւն ունեցողները (2էն 3) և (7էն 8) աստիճաններն են: Ձայնաշար մինօրին վերադարձին երկու տիէզները կը ջնջուին:

## ՄԵԾ ՁԱՅՆԱՇԱՐ ԵՒ ՓՈՔՐ ՁԱՅՆԱՇԱՐ (GAMME MAJEURE ET MINEURE)

36. Մաժօրը բնականէն ստեղծուած է. իսկ մինօրը արուեստական է:

37. Մաժօրին և Մինօրին տարբերութիւնը ձայնաշարին երրորդ աստիճանէն կրնայ որոշուիլ: Եթէ ձայնաշարին երրորդ աստիճանը կէս ձայն պակաս է. այսինքն, երկրորդ աստիճանէն երրորդը եթէ կէս ձայն հեռաւորութիւն ունի այն ատեն մինօր եղած կ'ըլլայ: Իսկ եթէ պակաս չէ, այլ մէկ ձայն հեռաւորութիւն ունի այն ատեն մաժօր է:

Օրինակ մաժօրի




Վերոգծեալ օրինակին երրորդ աստիճանը ամբողջ է, որով եղանակը մաժօր է:

Օրինակ մինօրի




*Վերոգծեալ օրինակին երրորդ աստիճանները կէս են որով եղանակը մինօր է:*

### ՀԱՐՑԱՐԱՆ

33. — *Ձայնաշարը ի՞նչ է։* — 34. *Մաժօր ձայնաշարէն ուրիշ մըն ալ կա՞յ։* — 35. *Ձայնաշարի մը աստիճանները իրարու հաւասա՞ր են.* — 36. *Մաժօրը ի՞նչ է։* — 37. *Մաժօրին եւ մինօրին տարբերութիւնը ի՞նչ է։*

---

## ԴԱՍ ԺԳ.

### ԵՂԱՆԱԿ (TONALITÉ)

**38. Եղանակը.** — *Կտորի մը* ոսկախազին (armanture) *մէջ եթէ ո և է նշան մը չկայ, այսինքն՝ դիէզ կամ պէմօլ, և այդ կտորը տօով կը վերջանայ, տօ մաժօր եղանակ կը կոչուի:*

Օրինակ տօ մաժօրի



Թիւ 35 համարին մէջ տօ մաժօռ ձայնաշարին աստիճաններու շարքը տեսանք ։ Նոյն աստիճաններու շարքին վրայ ամէն տեսակ ձայնանիշով կրնանք ձայնաշար մը կազմել . զոր օրինակ , եթէ եղանակը սոլ ձայնանիշով սկսի նոյն ընթացքին մէջ բոլոր փայերը տիյէզ պիտի ըլլան , ինչ որ եօթերորդ աստիճանը բեկ է , և որուն համար զգալի ձայնանիշ (note sensible) կը կոչեն ։

Ուրեմն վերոգծեալ տօ մաժօռով միեւնոյն եղանակը , վարը՝ սոլ մաժօռով ալ գրած ենք ։

Օրինակ սոլ մաժօրի



ՀՐԱՀԱՆԳ 18





## ՀՐԱՀԱՆԳ 19

MODERATO



Վերոգծեալ հրահանգներուն համար նախ եւ առաջ պէտք է չափական ընթերցում, յետոյ պէտք է երգել:

ֆա դօ սօլ րէ լա մի սի



Դիէզներու շարքը

սի մի լա րէ սօլ դօ ֆա



Բէմոլներու շարքը

### ՀՐԱՀԱՆԳ 20



*Վերոգծեալ հրահանգը չափական ընթերցումէն վերջ, պէտք է լաւ մը երգել: Յետոյ նոյն եղանակը so մաժօռ եղանակի փոխածելու է ուրիշ զի եղանակափոխութեան (transposition) այլ վարժուին աշակերտները:*

## ԴԱՍ ԺԴ.

### ՔՐՕՄԱԹԻԿ ՁԱՅՆԱՇԱՐ (GAMME CHROMATIQUE)

39. Քրօմաթիկ ձայնաշարը ունի պատահական նշանով (signe accidentele) *երկու կէս ձայն իրարմէ կը բաժնէ, որոնք հինգ պատահական նշան են ձայնաշարի մը մէջ:*

*Քրօմաթիկ ձայնաշարին ձայները եօթի տեղ 13 հատ են:*

### Օրինակ



*Վերոգծեալ օրինակին մէջ 13 ձայներն ալ իրարմէ կէս աստիճան հեռաւորութիւն ունին. եւ ասոր համար քրօմաթիկ ձայնաշար կը կոչուի: Իսկ մէկ աստիճան հեռաւորութիւն ունեցող ձայնաշարը diatonique կը կոչուի:*

*Gamme diatonique ըսելով ամբողջական ձայնաշար. իսկ gamme chromatique ըսելով՝ կիսաձայն ձայնաշար պիտի հասկնանք:*

ANDANTINO

## ՀՐԱՀԱՆԳ 21



Վերոգծեալ եղանակը նախ պէտք է շատ ծանր երգել, այսինքն largo աստիճանի. յետոյ իր ճիշդ արագութեամբ: Այս եղանակը լաւ մը սորվելէ վերջ պէտք է սոլ մինորի վերածել միեւնոյն եղանակը:

ALLEGRETTO

## ՀՐԱՀԱՆԳ 22



*Վերոգծեալ օրինակն ալ նախ եւ առաջ պէտք է շատ ծանր ընթացքով սոլ-ֆիլ, յետոյ իր ճիշդ արագութեամբ: Նոյն հրահանգն ալ լա մաժօրի պէտք է վերածել տալ աշակերտներուն :*

40. **Եղանակամիջոցը** (intervalle mélodique) *ձայնանիշերուն իրարու յաջորդութեանը կ'ըսուի :*

**Օրինակ**



41. **Ներդաշնակամիջոցը** (intervalle harmonique) *ձայնանիշերը իրարու վրայ դրուած ըլլալուն կ'ըսուի :*

**Օրինակ**



42. *Ներդաշնակամիջոցներու որակը երկու տեսակ է.* **Ա. Համաձայն** (consonance) **Բ. Անհամաձայն** (dissonance) ։

43. **Համաձայները** *երկու տեսակի բաժնուած են.* **Ա. Կատարեալ** (parfait) **Բ. Անկատար** (imparfait) :

44. **Կատարեալները** *հետեւեալներն են.* **Նոյնաձայն**, (unison), **Չորրորդ** (*) (quarte), **Հինգերորդ** (quinte), **Ութեակ** (octave) :

45. **Անկատարները** *հետեւեալներն են.* **Երրորդ Մաժօր եւ Մինօր** (tierce majeure et mineure), **Վեցերորդ Մաժօր եւ Մինօր** (sixte majeure et mineure) :

(*) *Չորրորդ միջոցը (Harmonie)ի եւ (Contre point)ի մէջ իբր համաձայն ընդունուած չէ: Սակայն առ այժմ պէտք է մենք համաձայն ընդունինք :*

46. **Անհամաձայններ** *հետեւեալն են.* **Երկրորդ Մաժօռ եւ Մինօռ** (seconde majeure et mineure), **Եօթերորդ Մաժօռ եւ Մինօռ** (septieme majeure et mineure)։ *Իսկ վերոյիշեալ ամբողջ միջոցներուն աւելցած* (augmentés) *կամ պակասածներն* (diminués) *ալ անհամաձայն են*։

47. **Ներդաշնակամիջոցներ** (intervalle harmonique) *հինգ տեսակ են.* 1. **Մեծամիջոց** (intervalle majeure). 2. **Փոքրամիջոց** (intervalle mineure). 3. **Կատարեալ միջոց** (intervalle parfait). 4. **Աւելցած Միջոց** (intervalle augmenté) 5. **Պակասած Միջոց** (intervalle diminué)։

48. **Մեծամիջոցներ** *հետեւեալներն են* **Երկրորդ, Երրորդ, Վեցերորդ, Եօթերորդ** *և* **Իններորդ**։ *Իսկ այս մեծամիջոցներուն վերի ձայնը կէս աստիճան իջեցնելով մինօրի կը վերածուի, այսինքն փոքրամիջոց կ'ըլլայ*։

49. **Մեծամիջոցի եւ Կատարեալ Միջոցի մը** (intervalle majeure ou parfait) *վերի ձայնը կէս աստիճան բարձրացնելով աւելցած միջոց կ'ըլլայ* (intervalle augmenté)։

50. **Փոքրամիջոցի կամ կատարեալ միջոցի մը** (intervalle parfait ou mineur) *վարի ձայնը կէս աստիճան իջեցնելով այսինքն պակսեցնելով պակասած միջոց* (intervalle diminué) *կ'ըլլայ*։

*Իսկ* **կատարեալ միջոցներ** *վերը յիշուած կատարեալ համաձայններն են*։ *Այսինքն նոյնաձայն, չորրորդ, հինգերորդ, և ութեակ*։

*Թիւ* 40 *համարէն սկսեալ մինչեւ* 50 *թիւ համարին բացատրութիւնները ձայնական երաժշտութեան վրայ գաղափար մը կազմելու համար կարեւոր ըլլալէն զատ, նոյն-բացատրութիւնները* (traité d'Harmonie)*ի ուսման համար ալ կարեւոր են*։ *Ուստի ուսուցիչը պարտաւոր է,* 40*էն* 50 *համարի մէջ եղած բացատրութիւնները աշակերտաց գրել տալ հետեւեալ ցուցակին համեմատ*։

Օրինակ

| Նոյնաձայն | | Երկրորդ աստիճան | | |
|---|---|---|---|---|
| Կատարեալ | Աւելցած | Մաժօր | Մինօր | Աւելցած |



| Երրորդ աստիճան | | | Չորրորդ աստիճան | | |
|---|---|---|---|---|---|
| Մաժօր | Մինօր | Պակսած | Կատարեալ | Աւելցած | Պակսած |



| Հինգերորդ աստիճան | | | Վեցերորդ աստիճան | | |
|---|---|---|---|---|---|
| Կատարեալ | Աւելցած | Պակսած | Մաժօր | Մինօր | Աւելցած |






*Վերոգծեալ ցուցակին մէջ գրուած օրինակները եղանակաւորմիջոցաւ (intervalle mélodique) գրուած են: Իսկ ներդաշնակաւորմիջոցի (intervalle Harmonique) համար այ միեւնոյն իմաստը ունին առանց բացառութեան:*

## ՀԱՐՑԱՐԱՆ

38. *Եղանակն ի՞նչ է:* 39. *Քռօմաթիք ձայնաշարը ի՞նչ է:* 40. *Եղանակամիջոցը ի՞նչ է:* 41. *Ներդաշնակամիջոցը ի՞նչ է:* 42. *Ներդաշնակամիջոցները քանի տեսակ են:* 43. *Համաձայնները քանի տեսակ են:* 44. *Կատարեալները որո՞նք են:* 45. *Անկատարները որո՞նք են:* 46. *Անհամաձայնները որո՞նք են:* 47. *Ներդաշնակամիջոցը քանի տեսակ է:* 48. *Մեծամիջոցները որո՞նք են եւ ինչ կերպով մինօրի կը վերածուին:* 49. *Աւելցած միջոցը ի՞նչ է:* 50. *Պակսած միջոցը ի՞նչ է:*

— ԿՀ —

# ԴԱՍԸՆԹԱՑՔ

# ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

## Բ. ՄԱՍ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՄԻԱՁԱՅՆ, ԵՐԿՁԱՅՆ ԵՒ ԵՌԱՁԱՅՆ

ԴԱՇՆԱԿԻ ԿԱՄ ԵՐԳԵՀՈՆԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ

# ՈՂԲԵՐԳ




Դըժնեաց գիշերն անցաւ ու լոյս արեւուն
Ծագեց կարմիր Հայաստանի սարերուն...
Դարձեալ մինակ զուրկ սիրելեացս գրկերէն,
Հեծող բուեր միայն ինծի ընկեր են։

Ո՛ դո՛ւ, անգութ Սեւ Հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես Թաղեր։

Զեփիւռներէն երջանիկ մի խնդրեմ լուր...
Այլ անոնք ալ սահին քովէս տխուր՝ լուռ,
Ծաղկունք թոռմեր և լռեր է ալ սոխակ,
Մա՛հ կը հոտի մա՛հ... Հայաստան աւերակ։

Ո՛ դո՛ւ, անգութ Սեւ Հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես թաղեր։

Երկի՛նք, գթա՛ յիս, տար զիս ի ծոց սիրելեաց
Եւ կամ ցցո՛ւր իրենց դամբանն սգազգեաց,
Եւ թող հոն՝ հոն՝ ցամքին արցունքս ու արիւն,
Ո՛հ, հոն վերջ տամ կենացս սեւ օրերուն։

Ցցո՛ւր, անգութ Սեւ Հողեր,
Իմ սիրելեացս դամբաններ։

(ՍԵՒ-ՀՈՂԵՐ) Պետրոս Դուրեան

# ԳԱՐՈՒՆ




*Ո՛հ, ի՛նչ անուշ է ի՛նչպէս զով,*
*Առաւօտուց փըչէս հովիկ,*
*Ծաղկանց վըրայ գուրգուրալով,*
*Եւ մազերուն կուսին փափկիկ.*
*Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,*
*Գընա՛ անցիր սըրտէս ի բաց։*

Ո՛հ, ի՜նչ աղու և սրտագին,
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին,
Ըզմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՛ թռի՛ր սրտէս ի բաց։

Ո՛հ, ի՜նչ մրմունջ հանես վտակ,
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ,
Նայի՛ն զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ Հայրենեաց,
Գնա՛, հոսէ՛ սրտէս ի բաց։

Թէպէտ թռչնիկ և հովն Հայոց,
Աւերակաց թռչի՛ն վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ.
Նոքա՝ հառաչք են Հայրենեաց,
Նոքա չերթա՛ն սրտէս ի բաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

# ԵՐԳ ՅՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

*Moderato* — Տ. ՉՈՒԽԱՃԵԱՆ



Ահա բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւէրժ միութեան,
Ջի՞ վայելուչ՝ որդիք Հայկեան,
Մէկտեղ հրճուիլն և ցընծան:
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կըրեմք մի սիրտ մի արիւն:

Վերցուր աչքըդ յերկնից կամար,
Փայլի հեռուն աստղ մի պայծառ,
Եւ դու, ո՛ Հայ, զարթիր սիրտ ա՛ռ,
Հայոց բաղդը ա՛լ չէ խաւար:
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կըրեմ՛ք մի սիրտ մի արիւն:

Բա՛ւ է այսչափ բաժանում,
Ըլլամ՛ք ուրախ և խնդում.
Նախանձ, վրէժ ձեզ թողում,
Անդունդք և վիհք անհատնում:
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կըրեմ՛ք մի սիրտ մի արիւն:

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ՚ալ ընենք միութեան.
Լեցուի փափաքդ Հայաստան,
Տես որդիք քո միանան:
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կըրեմ՛ք մի սիրտ մի արիւն:

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք,
Ո՞ չը գիտաց թէ մեք Հայ եմք,
Ո՞վ չը գիտեր թէ եղբայր եմք,
Արիք ծիծաղ դիմօք երգեմք.
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կըրեմ՛ք մի սիրտ մի արիւն:

Ո՞ր բռնաւոր ո՞ր օրէնքներ,
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր.
Ազգիդ օգուտն ու բարիքներ,
Սիրոյ գահն է յերկինս ի վեր:
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կըրեմ՛ք մի սիրտ մի արիւն:

Ս. Դ. ՓԱՓԱԶԵԱՆ.

# ՑԵՂԻՆ ՅՈՒՌՈՒԹՔԸ

*Indroduction*

*Andante*

Ա. ՄՍՐԼԵԱՆ
Op. 24



Քընարս գինիին մէջը թաթխեցի ,
Ու երբ ըսկսայ նըւագել ես զայն ,
Այգիէն խումբ խումբ այրիներ անցան ։

Քընարս աղբիւրին մէջը թաթխեցի ,
Եւ՜ երբ թրջըւած նըւագեցի զայն ,
Սափորով արցունք առնելու եկան ։

Քընարս արիւնին մէջը թաթխեցի ,
Երբ զոհի ձայնով նըւագեցի զայն ,
Մանուկներ եկան սուրերու նըման ։

Քընարիս՝ գայլէն աղիք մը տըւի ,
Եւ երբ ըսկսայ նըւագելես զայն ,
Եօթ լեռնէն անդին ոչխարնե՛ր փախան ։

Քընարս մոխիրին մէջը թաթխեցի ,
Երբ ճարճատման պէս նըւագեցի զայն ,
Այդ օր գիւղիս մէջ հըրդեհներ ինկան ։

Քընարս բոցերուն մէջը վառեցի ,
Հոգիիս խորը հըրթիռներ ինկան .
Ատոնցմով կ՚ուզեմ այրե՛լ ամէն բան . . . ։

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

# ԿՈՅՐ ՊԱՊՈՒԿԸ

(ՍԻՐՈՅ ԹԱԽԾԵՐԳ)

Ո՜հ եթէ նուագարան
ըլլայի եւ սիրոյ երգերս
եղանակէ՜ի:

ՍՂԻԱ



Քրտինքս սրբող միայն հերաց
Համար ճակատըս թափեց քիրտ.
Բուրումն անոյշ այն սուրբ քրտանց
Մընաց միայն, եղո՛ւկ, յիմ սիրտ.
Խնկեալ թափուր ժամ մ՚է իմ սիրտ...

Խօսքերս երգող միայն շրթանց
Համար շրթունքս ունեցան երգ.
Արձագանգը միայն մընաց
Երգոցն յիմ սիրտ իբրեւ ողբերգ.
Նուագա՛նոս սիրտս է խոր վէրք:

Արտասուքներս ծըծող շրթանց
Տըւին միայն շրթանցս համբոյր.
Պատկերն աչաց սեւ լոկ մընաց,
Եղո՛ւկ, սակայն չը գիտեմ ո՛ւր.
Արտասուքէ աչքս եղան կոյր...

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

# ԵՐԳ

Ա. ՄՍՐԼԵԱՆ
Op. 2ր



*Քո՛յր, մօտեցի՛ր կըրակին,*
*Ծըխէ՛ տերեւն այս բուրեան,*
*Զի ամէն բան ինձ կրկին*
*Կը դարձընէ հոտն արեան։*

*Քո՛յր, մօտեցի՛ր դարակին*
*Ու բե՛ր հեղուկն հընծանեան,*
*Զի ամէն բան ինձ կրկին*
*Կը դարձընէ համն արեան։*

*Քո՛յր, մօտեցի՛ր ճըրագին,*
*Մարէ՛ զայն, թո՛ղ լուսինկան,*
*Զի ամէն բան ինձ կրկին*
*Կը դարձընէ գոյնն արեան։*

*Քո՛յր, մօտեցիր նըւագին,*
*Երգէ՛ դաշտերն ու ցօրեան,*
*Զի ամէն բան ինձ կրկին*
*Կը դարձընէ ձայնն արեան։*

*Քո՛յր, մօտեցո՛ւր իմ ձեռքին*
*Աստուածաբոյն հըրացան,*
*Զի ամէ՛ն բան ինձ կրկին*
*Կը յիշեցնէ վրէ՛ժն արեան...։*

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

# ԵՐԳԵՐ ՈՒ ՎԷՐՔԵՐ

Introduction.

Andante

Ա. ՄԱՐՆԵԱՆ Op. 20




*Օտա՛ր, ամայի ճամբէքի վրայ*
*Իմ կարաւանըս մեղմ կը ղօղանջէ.*

Կանգնի՛ր, կարաւանս, ինձի կը թուայ,
Թէ՝ հայրենիքէս ինձ մարդ կը կանչէ։

Բայց լո՛ւռ է չուրջըս ու շըշուկ չը կայ
Արեւա՛ռ, անդո՛րր այս անապատում.
Ա՜խ, հայրենիքըս ինձ խորթ է հիմա,
Ու քնքուշ սէրըս ուրիշի գրկում։

Գընա՛, քարաւանս, ինձ հեռըդ քա՛շ տար
Օտա՛ր, ամայի ճամբէքի վըրայ.
Ուրտեղ՝ կը յոգնիս, գլուխըս դի՛ր վար —
Ժէռ - քարերի մէջ, փըշերի վըրայ...։

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Ա. ՄՍՐԼԵԱՆ




Ո՛չ անիրաւ էին և ո՛չ ալ անմիտ
Անոնք որ զձեզ կը պաշտէին անհրաւէր.
Ձեզի նըման՝ վերբերումով ճըշմարիտ՝
Ուղերձելով իրենց աղերսն ու թեւեր։

Թէ եղեւին ըլլայիք դուք կամ նոճի,
Ձեր շուքին տակ ըզգայնացա՛ծ անսովոր՝
Կը հըմայէր մարդ թէ խորհուրդ մը կ'աճի
Թուխ կանանչի փթթումին մէջ դարաւոր։

Տերեւաշարժ թէ ըլլայիք դուք կաղնիին,
Կամ անտառը սօսիներուն այն զառամ,
Մէջ ձեր անուշ սօսափիւնի ու ձայնին՝
Քուրմը կըրնար կարդալ գալիք մը պատգամ,

Թէ ըլլայիք հովանաւոր դրախտն Հայեաց
Լուռ պուրակին՝ աղբերակին ջինջ ու զով,
Երկրպագուն ձեր մօտ կու գար անձկայրեաց՝
Բոյն մը երգի՝ բոյր մը խունկի երազով։

Թէ ըլլայիք դուք բարձրաբերձ բարտիներ՝
Արձանացած պաշտումներու սլա՜ցք անքուն,
Արեւորդին ձեր կողին մէջ կը դիտէր
Խաչ մը խոկում մահուան ձորին վրայ կանգուն։

Թէ ըլլայիք նոյն իսկ ցածուն մորենին՝
Խոր տեսիլքի՛ մը կրակներուն հըրդեհուած,
Ձեր թաւուտքին մօտ՝ ուր բոցեր կ'արփունին՝
Պիտի զիրար տեսնէին մարդն ու Աստուած...։

Ո՛չ անիրաւ էին և ո՛չ ամբարիշտ
Անո՛նք որ զձեզ կը պաշտէին, ո՛վ ծառեր,
Ու նուագելու համար իրենց տենչն ու վիշտ՝
Որքան երբեմն հոգիք ձեր շուրջն են թառեր։

Հիմա սակայն լքուած էք՝ լո՛րկ ու անշուք,
Ցաւի քուրջեր կապուած են ձեր կանանչին,
Ու դրախտներ խուսած՝ ձեր մէջն անշրջուկ
Ալ չեն մրափեր իրենց անուրջքն առաջին...։

Իսկ ես թէ ձեր քուրմն ըլլայի որ մ'եւեթ՝
«Ոսկի ոստ»ով կը դընէի ձեզ պատուաստ,
Որ ձեր այն նո՛ր բողբոջումի գիրկն անհետ
Տերե՛ւ մ'իսկ կեանքն ըլլար պաշտում և իմաստ։

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

# ԱՆՑՈՐԴԻՆ




Անցո՛րդ, սա գետին ջուրէն մի՛ խմեր,
Հոն է խըղդըւած կորիճը գիւղին.
Գուցէ ջուրն այդ զով, շրթունքներըդ ջեր
Զովացնելու տեղ կ'այրէ տենդագին:

Որչափ որ ուռին՝ յորդավազ գետին
Վըրայ արտասուեց ամէն օր անձայն,

Որչափ որ մայր մը կորուսեալ զաւկին
Համար փղձկեցաւ այդտեղ ողբաձայն,

Դարձեալ այսքա՜ն ալ չի կրցաւ երբեք
Մոռցընել սուգերն այս դաշտավայրին,
Անցո՛րդ, թող տուր այդ ջուրին ահաբեկ
Որ ժայռերու տեղ փշրի՛ ողբագին։

Ես իմ սափորըս այնտեղ կոտրեցի
Որ այրող ջուրէն չըլլայ թէ առնեմ,
Եւ հիմա իմին քայլերս առնացի
Կ'ուղղեմ աղբիւրին ճամբան դալկադէմ...։

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

# ԾՈՒԳ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դաշնաւորեց
Ա. ՄԱՐԼԵԱՆ

Lento



Իմ սիրելի զաւակունքըս ,
Կը թափառին օտար յաշխարհ․
Ես ո՞ւր դիմեմ, ո՞ւր փնտըռեմ,
Կը ծառայեն այլոց խոնարհ ։

Եկա՛յք որդեակըք իմ,
Ձեր մօրն այցելութեան ։

Թարեր անցան լուր մը չառի ,
Իմ քաջերըս մնացան կորան ,
Կ՚ուլամ՝ արիւնս կը սառի . . .
Մէկը չունիմ տայ ինձ դարման ։

Եկա՛յք որդեակք, և այլն ։

Արիւնս ցամքած , սիրտըս մաշած ,
Դէմքս է տըխուր մինչ յաւիտեան․
Եւ կարօտով իմ որդեկաց ,
Պիտի իջնեմ սեւ գերեզման ։

Եկա՛յք որդեակք, ևայլն ։

Եւ դու հովիւ թափառական ,
Կ՚երգես տըխուր ի մէջ հովտաց․
Ե՛կ, արտասուենք թանկ կորըստեան . . .
Տըխուր մահուան մեր որդեկաց ։

Եկա՛յք որդեակք, և այլն ։

Իսկ դո՛ւ կըռունկ իմ Հայրենեաց ,
Գնա՛ հեռո՛ւ աչքէս ի բաց . . .
Ցետին ողջոյնս տար զաւակացս ,
Զի կեանքիս մէջ յոյս է մնած ։

Եկա՛յք որդեակք, և այլն ։

# ՏԱՂՒՈՐԻԿ

Դաշնաւորեց
**Ա. ՄԱՐԼԵԱՆ**

*Tempo di Marcia*



Տալւորիկի գաւակ եմ ղորդ
Թաղքըցուց պէս չեմ թուլամորթ ,
Սարի գաւակ , քարի որդի ։
Հի՛ն քաջ հայոց եմ մնացորդ ։

Տալւորիկի գաւակ եմ քաջ
Չեմ խոնարհիր ուժի առաջ
Թարուտ լերանց եմ ազատ լաճ
Չեմ տեսել ոչ արօր ոչ մաճ ։

Հա՛յ աղբըրտիք , վա՛յ աղբըրտիք .
Տալւորիկի գաւակ եմ քաջ .
Ազատութեան սիրոյն համար ,
Եկէք դէպ ինձ , յառա՛ջ յառա՛ջ ։

Երբ իմ աչքերս բացի յաշխարհ
Ազատ տեսայ մեր սար ու քար ,
Մինչ չփակեմ աչքս խաւար
Գիտ՝ չի կոխէ հոս ոտք օտար .

Իմ մամ ծնաւ գլխ սարերու ծոց ,
Ընկոյզի կոճղ մ՝ եղաւ օրօրոց .
Տըկլոզ ծընած , մեծցայ ալկլոզ ։
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց .

Հայ աղբըրտիք , վայ աղբըրտիք , ևն.։

Ոտքըս բոպիկ , կուրծքըս միշտ բաց ,
Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց .
Ինձ մօտ մէկ է արեւ , փուք , ցուրտ ,
Բաւ է չիշխէ , Պարսիկ կամ Թուրք ։

Իմ կեանքըս խիստ է եւ չարքաշ ,
Փափուկ կեանքի բնաւ չեմ վարժ .

Բնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մրրիկ ու երկրաշարժ.

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, եւն։

Հարըստութիւն, ուսում, հանճար,
Փառք ու պատիւ չեն ինձ համար.
Բա՛ւ է ունիմ տէգ, թուր, խանչար,
Բաւ չի խորոխտար վըրաս օտար.

Սիրած զէնքերս չեմ ձգեր ձեռքէս
Արիւծն անվախ չէ ինծի պէս,
Կը սիրեմ որս, կռիւ, աւար
Կը սպասեմ երբ ընկնի հաւա՛ր.

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք եւն։

Թ՛ող այլք ընակլին հովիտ ու դաշտ,
Վատ անգութին հետ լինին հաշտ,
Ես պիտ մընամ միշտ աննուաճ
Թէև վրաս գայ քըման վաշտ։

Ցորենի տեղ կ'ուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ.
Շինեմ փետատ, խափ, խաչերկաթ
Ծանր է դատուլս, բայց եմ ազատ։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք եւն։

Ալծեամի պէս կը ցատկոտեմ,
Առիւծի պէս կը մռնչեմ,
Ծովի նման կը փրփրիմ,
Կայծակի պէս կը հարուածեմ.

Կուրոյ դաշտը բաղձն է կեանքին
Երբ կը ծաղի արշալոյսը ,
Կամ աւետիս տայ դրօշակին
Կամ պաղ տեսնէ քու երեսը :

Հայ աղբըրտիք , վայ աղբըրտիք , նեն :

Հաւար Ինկնի երթամ յառաջ
Սասնոյ լերինք հանեն հա՛ռաչ ,
Հառաչ հանեն և ներկուին
Իւր կորճին արիւնով քաջ :

Կորիճին սիրտ՝ կորիճին ձեռք ,
Ինչ փոյթ քաջին հազար մէկ վէրք
Մէկ հարուածին կուտաս հարիւր
Ազգային լէշ կանես հազէր :

Հայ աղբըրտիք , վայ աղբըրտիք , նեն :

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ (Պերճ Մուշլու)

## ԵՐԿՁԱՅՆ ԵՐԳԵՐ

# ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ

Հեղինակեց
Ա. ՄԱՐԼԵԱՆ



# ՁԱՅՆ ՏՈՒՐ

Դաշնաւորեց
Ա. ՄԱՐԼԵԱՆ



Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես.
Ողբակից լինել չկամի՞ս դժբաղդիս։
Շարժեցէ՛ք զեփիւռք, ալիքը վէտ վէտ.
Խառնէք արտասուքս, այս ջրերի հետ։

Հայաստանի մէջ անցքերին վըկայ,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ, ինձ ասա՛,
Մի՞թէ միշտ այդպէս կը մնա՞յ Հայաստան,
Փըշալից անպատ երբեմն բուրաստան։

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի։
Միթէ Աստուծոյ աթոռին մօտին,
Անարժա՞ն է Հայն և Հայի որդին։

Արդեօք գալու է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ հայազգիք,
Դիմել դէպ իւրեանց սիրուն Հայրենիք։

1860 ԹԱՑՑԻ

# ՀԱՅՐ ՄԵՐ

ԱՀԱՐՈՆ ՄՍԸՐԼԵԱՆ



Խրիմեան Հայրիկի յիշատակին



Ծանօթութիւն. — *58րդ էջին «Քոյր մօտեցիր» երգը պէտք է երգել* adajio *ընթացքով:*

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Դաւիթ ԽԱՉԿՈՆՑ

## ԴԱՍԸՆԹԱՑՔ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

*Մամուլի տակ են և շուտով հետզհետէ լոյս պիտի տեսնեն.*

*Երկրորդ Մաս. Արեւմտեան Հին Ազգեր (Յոյներ և Հռոմայեցիներ) քարտէսներով, պատկերներով և ընթերցումներով*

*Երրորդ Մաս. Միջին Դար՝ քարտէսներով, պատկերներով և ընթերցումներով:*

*Չորրորդ Մաս. Նոր Դար՝ քարտէսներով, պատկերներով և ընթերցումներով:*

*Հինգերորդ Մաս. Ժամանակակից Դար՝ քարտէսներով, պատկերներով և ընթերցումներով:*

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

# ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԵԹՈՏ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ցօրինեց Կ. Վ. ՊԱԼԱՊԱՆ

### Է. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Անուրանալի կերպով ընդունուած սկզբունք մըն է այլ եւս թէ մանուկը իր առաջին քայլերուն մէջ պէտք է ուսանի զուարթ կերպով։*

*Կարապետ էֆ. Պալապան իր երկարատեւ տարիներու փորձառութեամբ լիուլի գործադրած է մանկավարժական բոլոր նորագոյն մեթոտներն որով խիստ դիւրըմբռնելի՝ փոքրիկ և զուարթ պատմութիւններով ու հեքեաթներով կ'ուսուցանէ ընթերցանութիւնը։*

Գին 2 դրուշ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

**Բ. ԿԱՆԱՉԵԱՆ**

# ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

*Ծանօթ երաժիշտ Տէր Բարսեղ Կանաչեան հաւաքելով հայկական ամէնէն գեղեցիկ երգերը ձայնագրած ու ամփոփած է* **ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ** *անունով 2 հատորներու մէջ։*

*Գիրքը կը պարունակէ նաեւ ծանօթ Հայ երաժիշտներէ դաշնակի ընկերակցութեամբ երգուելու յարմար նոր երգեր։*

Գին իւրաքանչիւր հատորին

5 Ղրուշ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԳՐՊԱՆԻ

# ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Յօրինեց **ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ**

*Հայ ուսանողութիւնն երկար ատենէ ի վեր Ֆրանսահայ Բառարաններու չգոյութենէն չափազանց կը նեղուէր։ Այդ պակասը լաւ կը լրացնէ ներկայ Բառարանը, որ յօրինուած է ծանօթ ֆրանսագէտ և մասնագէտ ուսուցիչ Միհրան էֆ. Յովհաննէսեան։*

*Հակառակ իր ծաւալին ու պարունակութեանը, խիստ մատչելի գնով մը հրատարակուած է գիրքը։ Կը պարունակէ 816 էջ և 40,000 բառ և ոճ։*

| | | |
|---|---|---|
| Գին | Ախապար | **12.50** |
| | Լաթակազմ | **15** |
| | Կաշեկազմ | **25** |

130